ԿԱՐԾԻՔ

ԻԳ.00.01 - «Քաղաքական գիտության պատմություն և տեսություն» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների դոկտորի գիտական աստիճան հայցող

ՀՐԱՉՅԱ ՎԱՂԱՐՇԱԿԻ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆԻ՝

«ՔԱՂԱՔԱԳԻՏԱԿԱՆ-ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՂԱՇԱՐԺԻ ՀԱՐԱՑՈՒՅՑԸ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԵՋ»

ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսը քննարկում է արդի քաղաքագիտական տեսության կարևոր հիմնախնդիրներից մեկը՝ քաղաքականի և կրոնականի համադրումը քաղաքագիտական նոր հարացույցում: Դա կարևոր խնդիր է քաղաքագիտության մետատեսության զարգացման առումով, նաև անվտանգության հայեցակարգերի մշակման համար:

Ատենախոսն անդրադառնում է հիմնախնդրի տեսական հիմքերին, պատմականորեն ձևավորված մեթոդաբանական մոտեցումներին և կրոնական արժեքային իմաստավորումներին, նոր հարացույցը քննարկելիս ցուցաբերում է հեղինակային մոտեցում: Մեզանում կարևոր այդ հիմնախնդրի քաղաքագիտական վերլուծությունների սակավությունը պայմանավորում է **ատենախոսության թեմայի արդիականությունը**:

Ատենախոսական աշխատանքը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, եզրակացությունից և գրականության ցանկից:

Աշխատանքի առաջին գլխում քննարկվում են քաղաքական աստվածաբանության հասկացութային ապարատը, նոր հարացույցի տեսական

հիմքերը, հանգամանորեն ներկայացվում են Կառլ Շմիտի քաղաքագիտական-աստվածաբանական ուսմունքի հիմնական տարրերը:

Երկրորդ գլուխը նվիրված է համակարգային մոտեցման փիլիսոփայական հիմքերի և բարդ մտածողության սկզբունքների շարադրմանը: Այստեղ ներկայացված են բարդ ադապտիվ համակարգերի տեսության հիմնադրույթները:

Ատենախոսության երրորդ գլխում քննարկվում են անվտանգության միջավայրի վրա ազդող տարբեր գործոններ, գլոբալացման պայմաններում պատերազմների բնույթի և ձևի փոխակերպումներ:

Չորրորդ գլուխը պարունակում է հարուստ տեղեկատվական նյութ անգլալեզու գրականությունից արդի կոնֆլիկտների ոչ գծային մոդելների վերաբերյալ: Այստեղ ներկայացված է նաև ցանցակենտրոն պատերազմների գաղափարը:

Ատենախոսության յուրահատկությունն այն է, որ ատենախոսը իրականացրել է մեծածավալ քաղաքագիտական գրականության վերլուծություն՝ զուգորդելով այն փիլիսոփայական նոր մոտեցումների հետ: Ուսումնասիրելով հարուստ տեսական նյութ՝ ատենախոսը հիմնավորում է քաղաքագիտական նոր հարացույցի ճանաչողական առավելությունները: Ուշագրավ է ատենախոսի կողմից առաջարկվող հարացույցի եռաչափ կատեգորիալ տարածության գաղափարը /էջ 99-100/: Շատ կարևոր այս գաղափարի տեսական մշակումն ատենախոսության գիտական նորույթն է: Այն թույլ է տալիս քաղաքագիտության մետատեսության շրջանակներում նորովի իմաստավորել անվտանգության հայեցակարգերը:

Այսօր, ըստ ատենախոսի, «կարելի է դիտարկել ավանդական պետական լեգիտիմության սկզբունքային չընդունումը նոր դերակատարների կողմից» /էջ 106/: Այս դիպուկ միտքը, լինելով չափազանց արդիական, պարունակում է հետագա մշակման հնարավորություն և կիրառելիության շրջանակների ընդլայնում: Այս մտքի կապակցությամբ ատենախոսը գրում է. «Նոր հարացույցը թույլ է տալիս նկարագրել և

հետազոտել ակտուալ իրականության այսպիսի կոշտ չընդունումը և այն կտրուկ փոխելու ձգտումը» /էջ 106/: Այսինքն, նոր հարացույցի հնարավոր կիրառելիության սահմաններն ավելի ընդգրկուն են, քան ներկայացված է ատենախոսության շրջանակներում:

Ատենախոսությունը կատարված է գրագետ, հատկապես արժեքավոր ենք համարում հեղինակի կողմից նոր հարացույցի մշակումը: Ատենախոսության եզրահանգումները մեթոդապես հիմնավորված են և հետևողականորեն փաստարկված: Ընդ որում, ատենախոսության գիտական արժեքը կարևորվում է ոչ միայն դուրս բերված եզրահանգումների ճշտության, հիմնավորվածության և հուսալիության տեսակետից, այլ նաև մեծածավալ նյութի մշակվածության առումով: Ատենախոսն իրեն հասու օտար լեզուներով հրատարակված մեծածավալ գրականություն է ուսումնասիրել և երկրորդային վերլուծության ենթարկել: Ատենախոսի կողմից ստացված գիտական արդյունքների ճշտությունը, հիմնավորվածությունն ու հուսալիությունը հաստատում է ոչ գծային գիտության ուղղվածություն ունեցող հայեցակարգերի, տեսական մշակումների և համաշխարհային նշանակության առաջատար քաղաքագետների մեթոդաբանական մոտեցումների օգտագործումը:

Ատենախոսության գիտական նորույթը պայմանավորված է տեսական ու կիրառական բնույթի հետևյալ արդյունքներով՝

- ատենախոսության մեջ հիմնավորված է քաղաքագիտության տեսությունում բարդ մտածողության սկզբունքների և քաղաքական աստվածաբանության հիմնադրույթների, էվոլյուցիոն փիլիսոփայության մոտեցումների կիրառման նպատակահարմարությունը:
- ատենախոսը մշակել է նոր քաղաքագիտական հարացույցի եզրույթներ և եռաչափ տարածության սխեման՝ հարստացնելով քաղաքագիտության

կատեգորիալ ապարատը և նոր մեթոդաբանական հնարավորություններ ստեղծելով անվտանգային հետազա ուսումնասիրությունների համար,

- կիրառական առումով շատ արժեքավոր է ատենախոսի կողմից կոնֆլիկտի ոչ գծային մոդելի շրջանակներում անվտանգության միջավայրի նորովի իմաստավորումը,
- ուշագրավ են ատենախոսի մտքերը ցանցակենտրոն պատերազմների վերաբերյալ:

Ատենախոսի ստացած արդյունքների գիտական նշանակությունն այն է, որ ատենախոսությունը կարող է կիրառվել որպես դասախոսական նյութ բուհերում քաղաքագետների, միջազգայնագետների, փիլիսոփաների, կոնֆլիկտաբանների, հումանիտար ոլորտի մասնագետների պատրաստման համար:

Ատենախոսական աշխատանքը զերծ չէ որոշ թերություններից՝

- Որպես ատենախոսության նոր գիտական արդյունքներ և դրույթներ ներկայացված թիվ 2, 8 և 13 կետերը /էջ 13 և էջ 15/ ոչ դրույթներ են, ոչ էլ արդյունքներ: Պարզապես նշվում է, որ ատենախոսությունում «հետազոտվում են» այս կամ այն խնդիրները: Բայց ատենախոսությունն ինքը հետազոտություն է, հետևաբար, հետազոտության արդյունքը չի կարող լինել հետազոտությունը:
- Նույն պատճառով որպես հեղինակի ներդրում ներկայացված չորս կետերից երկրորդը /էջ 16/ չի կարող ներդրում համարվել:
- Բարդ համակարգերի դիտարկման ժամանակ համակարգերի ընդհանուր տեսության հիմնական օրենքների և մոդելների կիրառելիության վերաբերյալ ատենախոսի պնդումն /էջ 14/ անտեղի է: Այդ տեսությունը մշակվել է հենց բարդ համակարգերի հետազոտության համար: Կարիք չկա ներկայացնել դա որպես պաշտպանության ենթակա դրույթ:
- Ատենախոսը նորույթ հանդիսացող արդյունքներից առանձնացնում է չորս դրույթ որպես սեփական ներդրում գիտության մեջ /էջ 16/: Ստացվում է, որ 13-

15-րդ էջերում որպես նոր գիտական արդյունք ներկայացված դրույթները իր սեփական ներդրումը չեն: Այդ դեպքում ինչո՞ւ են դրանք համարվում նոր:

- Առաջին գլխում ատենախոսը, շարադրելով քաղաքական աստվածաբանության դրույթները, 30 անգամ հղվում է Փ. Կանի «Քաղաքական աստվածաբանություն» աշխատության վրա, ինչը շարադրանքին ռեֆերատիվ բնույթ է հաղորդում:
- Դժվար է համաձայնվել ատենախոսի հետևյալ մտքի հետ. «Հասկացությունները և գաղափարները ... մինչ բանականության կողմից իմաստավորումն ու ըմբռնումը ... կարող են ինտուիտիվ զգացվել» /էջ 50/: Հասկացությունները ռացիոնալ իմացության ձևեր են, դրանք չեն «զգացվում»:
- Ատենախոսությունում կան տեխնիկական թերություններ, օրինակ՝ կրկնություններ /էջ 21 և էջ 7/, չափից շատ հղումներ:
- Գրականության ցանկում չկան հայ հեղինակների /բացի Հ. Քոթանջյանից/ աշխատություններ: Այնինչ, հիմնախնդրի արդիականությունը հիմնավորելու և մշակվածությունը ներկայացնելու պահանջը ենթադրում է քաղաքագիտության տեսության և անվտանգային հետազոտությունների ոլորտների հայ մասնագետների աշխատությունների իմացություն: Իսկ Հայաստանում ատենախոսություններ են պաշտպանվել նաև ոչ գծային հարացույցի հիմնախնդիրների վերաբերյալ, այդ թվում ռուսերեն լեզվով: Զարմանալի է, որ գրականության ցանկում տեղ չեն գտել ատենախոսի գիտական խորհրդատուների աշխատությունները:

Նշված թերությունները չեն նսեմացնում աշխատանքի գիտական արժեքը: Կարելի է պնդել, որ այս ատենախոսությունը որոշակի նվաճում է քաղաքագիտության բնագավառում, այն մեթոդաբանորեն հիմնավորված է և ունի քաղաքագիտական տեսական ուղղվածություն:

Ատենախոսի կողմից հրատարակված աշխատություններն արտացոլում են ատենախոսության հիմնական դրույթները: Սեղմագիրն արտացոլում է աշխատանքի հիմնական բովանդակությունը և հեղինակի ձեռքբերումները:

Եզրակացություն

Հ. Վ. Արզումանյանի՝ «Քաղաքագիտական-աստվածաբանական տեղաշարժի հարացույցը ազգային անվտանգության տեսության զարգացման մեջ» ԻԳ.00.01 - «Քաղաքական գիտության պատմություն և տեսություն» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը ավարտուն գիտահետազոտական աշխատանք է, որը վերաբերում է տեսամեթոդաբանական և գործնական առումով արդիական թեմային: Դոկտորական ատենախոսությունը ամբողջական գիտական աշխատանք է և համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի *ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի* 8-րդ կետի պահանջներին:

Ելնելով վերոշարադրյալից՝ գտնում եմ, որ Հ. Վ. Արզումանյանը արժանի է ԻԳ.00.01 - «Քաղաքական գիտության պատմություն և տեսություն» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի շնորհմանը:

Փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Ե. Մկրտիչյան

«Ա. Ե. Մկրտիչյանի ստորագրությունը հաստատում եմ»:

Երևանի պետական համալսարանի
գիտական քարտուղար Լ. Ս. Հովսեփյան

30.06.2020